

ՊՈՂՈՍ ԲԷՅԱՆ

Փոշոտ, անտանների էր մինչև Նորաշէն տանող այդ ճանապարհը։ Արագածից երբեմն հազիւ փչում էր մի թեթեւ քամի, այն էլ զովացուցիչ էր միայն այն ժամանակ, երբ սահուն ամպերը ընդմիջաբար հով էին սփռում։ Ձախ կողմում, իրաւ է, կային գիւղեր, սակայն հեռու-բլուրների ստորոտների վրայ հանգչած, չոր և տխուր։

Եւ փոշին, ճանապարհից անցնող սայլերից յուզուած, ծածկում էր մեզ, տեղ տեղ փոքրիկ թաթառներ կաղմում ու պտոյտ գործում ամայի դաշտերի վրայ։

Բարձրանում էինք. այդ էր միայն մխիթարականը։ Յոգնած, ծարաւ, ստիպուեցանք շարհամարհել մի գիւղի կողքից վազող տղմուտ ջուրը. մի քանի ողկոյզ խաղող ունէինք. թաթախեցինք Արագածի այդ տղմուտի մէջ, որ գոնէ սառնորակ էր, և ախորժակով կերանք։

Բայց Նորաշէնը մօտ էր։ Ձիերը անյազութեամբ խմեցին տղմուտ ջրից, կառապանը նստեց և մի ժամ ևս տանջւելուց յետոյ, փոշեթաթախ ու յոգնած՝ գիւղ հասանք։

Կառքը կանգ առաւ գիւղի ծայրին շինած խանութի առաջ՝ ձիերին կեր տալու։ Խանութի կողքին մի սենեակ կար հիւրերի համար. զով էր այնտեղ. շոգը կոտրուել էր դրսում իսկ, ուր այժմ սկսել էր ցուրտ քամի փչել ձիւնապատ Արագածից։

Որքան գեղեցիկ է պատմական այդ լեւրան տեւքը Նորաշէնից։ Մի քանի քայլ—և դիմացս էր վեհափա-

ուրէն բազմած բառագլուխ լեռը իր խոշոր, ձիւնալից խառնարանով, քղանցքը վայելապէս փռած աջ ու ձախ. առջևից մի չքեղ ձորակ դալար արօտներով, հեռուն ծառազարդ գիւղեր սև բարէ եկեղեցիներով, ապա արտեր ու գեղածիծաղ հովիտներ...

Շոգից, փոշուղ և ամայութիւնից յետոյ, այդ ջրաշատ բարձրութիւնը, ստուերալից ծործորներն ու արօտալից առապարները կենսապարար էին և յանկուցիչ...

Սառը ձմերուկ բերին. ձմերուկի հետ ներս մտաւ կարճահամակ մի ծերունի, որ հագել էր քաղաքացու պէս մաքուր և կրծքի վրան էլ մի ոսկէ մեդալ: Խոնարհաբար դիտարկը հանել՝ բարեւում էր:

— Գալուստներդ բարի, ասաց ծիծաղը դէմքին — եթէ այստեղ հանգիստ չէք, համեցէք տուն գնա՛նք: Հանգիստ էինք: Հրաւիրեցինք մասնակցել ձմերուկի ուտելուն: Ձը մերժեց:

— Սնուն է, հարցուց. յետոյ, դառնալով խանութի ծառային, ասաց.

— Ո՞րտեղից բերիր այս ձմերուկը, Աւետիս:

— Մառանից, աղա:

— Ապրես. լինն ես ընտրել:

— Հրամանք ես...

Ծերունին կտրեց մի շերտ, ժպիտը դէմքին մեղ դարձաւ. — խանութը իմն է, ասաց — ծերացել եմ՝ որդուս եմ յանձնել: Ձի էի նստել. ինձ իմաց տուին թէ առաջնորդն է եկողը, բայց դուք էիք:

Հետս էլ միաճնի մի վարդապետն էր:

— Հայր սուրբն էլ առաջնորդ է. ցոյց տուի նրան — Կարսի առաջնորդն է:

— Իրան, զարմացաւ ծերունին — բայց չէ՞ որ Կարսի առաջնորդը Պետերբուրգ էր գնացել:

— Վերադարձայ. ժպտաց հայր-սուրբը:

— Գալուստդ բարի, հայր-սուրբ ջան... է, ինչ աբիր Պետերբուրգում. գործդ յաշնոյ գնաց:

— Բաւական յաջող:

— Աստուած հաստատ պահի... համեցէք ձմերուկ, լաւն է... ասում են որ զոչաղ մարդ ես, ես զոչազնեւրին սիրում եմ, ուրեմն ուսումնարանի շէնքը ետ ես առել: Ասում են ետ ես առել...

— Համարեմ, ասաց հայր-սուրբը. ձայնս լսեցին, այնտեղ այսպէս չէ, որ մարդու ձայնը խեղտեն...

— Հրամանք ես, աջիդ զուրբան. մեր մէջ ամեն ինչ ալան-թալան է. ամէն մի պրիստաւ օրէնք է դնում, օրէնք ջնջում... Էհ, փառք Աստուծոյ, որ զոչաղ դուրս եկար... դէհ, համեցէք գնանք տուն մի ճաշ անենք, էս ձմերուկը ջուր դարձրեց փորումս եղածը:

— Ո՛չ, մերժեց հայր-սուրբը. — շնորհակալ ենք. Աբարան կերթանք ճաշելու:

— Հիմա էջմիածին էք գնում:

— Այո.

— Վեհափառը Ղփչաղ էր, երէկ գնաց... Տնաքանդի մարդու ոչ գալն է իմացում, ոչ գնալը. հասարակ մարդու պէս է բռնում իրեն... քէֆս չի գալիս դրանից: Պաթուղիկոս մարդը քիչ պիտի իշխանավարի նստի կանգնի... Երէկ որ դայիք, ես էլ ձեզ կ'ընկերանայի ու մի լաւ քէֆով Ղփչաղ կը տանէի ձեզ:

— Էջմիածին գնաց վեհափառը:

— Տէրը գիտէ. սկի ասում է թէ ուր է գնում. մէկ էլ տեսար ձի նստեց ու քշեց. մարդ ես՝ իմացիր թէ ուր է գնում. մէկ օր էստեղ է, մէկ օր էնտեղ... զոչաղ ծերունի է, ես ու իմ Աստուածը...

Քիչ լուսթիւն տիրեց. ծերունին անյադաբար ձմերուկ էր ուտում, ծարաւ էր. ըստ երևոյթին քիչ կոնծել էր: Յոգնած, մենք քիչ կերանք և ընկողմանեցինք բարձերի վրայ:

— Երեւի ուզում էք քիչ հանգստանալ... բերանը թւով սրբեց ծերունին և ուտելը ընդհատեց:

— Ոչ, այժմ կը շարունակենք ճանապարհը, ասացի ես — չարժէ այստեղ քնել:

—Ձեր գործերը ինչպէս են, խօսեցրեց ծերունուն հայր սուրբը—բերք լաւ էր այս տարի։

—Փառք իրեն, լաւ էր. բայց անձրև չեկաւ, ցորենը շատ չը բռնեց, հասկերն էլ կարճ մնացին։

—Իսկ ձեր գիւղում ուսումնարան բաց են արել։

—Հրամանք ես. այս տարի ուղում են բաց անել. մարդագլուխ տուրք են նշանակել, բայց տեսնենք կը տան։ Է՛հ, ոչ ոք սիրտ չունի։

—Ի՞նչ վնաս ունի. տղէտ մ՛նալուց՝ աւելի լաւ է տալ։

—Ինչ արած, պիտի տանք. պրիստաւը կրակ կը դցի գիւղի մէջ՝ եթէ չը տանք. բայց ես, ես ուրիշ եմ ես չեմ տալ. ինձ զօռել չեն կարող, ես որդիներին Թիֆլիզ եմ ուղարկելու։

—Դժուար թէ ընդունեն, միջամտեցի ես—Թիֆլիզի դպրոցում տեղ չը կայ։

—Բաս հայր, սուրբ, Պետերբուրգ գնացիր, ի՞նչ են ասում, չե՞ն թողնելու որ մենք բանանք մեր ուսումնարանները։

—Ոչինչ յայտնի չէ. Օրէնքի դէմ շատ բաներ են արել այս կողմերում... Իսկ ձեր նոր նահանգապետը ինչպէս է, լաւ մարդ է։

Ծերունին դադարեց բոլորովին ուտելուց, այս անգամ քղանցքով սրբեց բերանը, բեխերը, յետոյ ձեռքերը և ասաց։

—Ձէ, հայր սուրբ ջան, շատ կրակ կուլ տուած մարդ է. կասես գիժ լինի. համ էլ մեր գիւղերի վրայ շատ բարկացած է. որ ձեռքիցը դայ՝ բարութանդ անել կը տայ։

—Ինչո՞ւ։

—Պատմեմ։ Անցեալ տարի, երբ դեռ նոր էր մշտնելու մեր նահանգը, պրիստաւը լուր դրկեց ինձ... գիւղի մեծը դէ ես եմ... Թէ Վոլոդա բահեա, նոր նահանգապետը գալու է, գիւղերիցը ձիաւորներ հանիր

որ դէմը դանձ... գիտէր, որ ուզենամ հաղար ձիաւոր-
կը հանեմ... Հարցնում եմ թէ պրիստաւ ջան, ախր
հիմա գործերի ժամանակն է, որտեղից շատ ձիաւոր
հանեմք. պրիստաւն էլ թէ՛ ամեն գիւղից տասը ձիաւոր
ու տէրտէրը որ լինեն՝ հերիք է։ Ի՞նչ արած. նստեցի ձիս,
մարդ ուղարկեցի գիւղերն ու մի օրուայ մէջ 100 ձիա-
ւոր հանեցի. ամեն գիւղ իր տէրտէրովը, աղ ու հացն
առած, գնացինք ճանապարհի զրաղին շարուեցինք. ես
էլ դէհ, մեղալս կախեցի. ընչի չը կախեմ... ձիաւոր-
ներին կարգով կանգնեցրի ու սպասում ենք...

Հրէս նահանգապետս դալիս ա. մի փիս-փիս նա-
յում ա մեզ վրայ. յետոյ ետ դառնում ինձ թէ՛ զքանի
գիւղից էք—Տասը գիւղից, ձերդ մեծութիւնս.—Քանի
հոգի էք—Հարիւր՝ ձերդ մեծութիւնս. Ունքերը վրայ
տուաւ, ձեռքովը ետ հրեց աղն ու հացը ու ասաց
—Բաս ես ձեր կաթուղիկոսից պակաս մարդ եմ,
որ ամէն գիւղից հարիւր ձիաւոր չէք հանել... գնացէք,
ես ձեր աղն ու հացը չեմ ընդունում...

Ես՝ ասես, մի քիչ էլ կոնծել էի, կրակ դարձայ.
ոնց, տօ, դու ո՞վ ես, ինչոցո՞ւ ես, որ գործերի այս-
պէս ժամանակ ուզում ես սաղ գիւղը առաջդ բերել.
ոնց թէ քեզ համեմատում ես մեր հոգեւոր տիրոջ հետ.
դու մի չինովնիկ, նա մի իշխան. դու մի ծառայ, նա
մի աղա... կարմրեցի, բեխերիս ամեն մի մազը դողաց.
ձեռքովս տէրտէրներին նշան արի որ աղ ու հացը ծա-
լեն, խուրճիւնը դնեն, յետոյ մի խոր գլուխ տուի նահան-
գապետին, գլխարկս պինդ կոխեցի գլխիս ու՝

—Տղերք, ձիանոնց գլուխը շուռ տուէք!...

Պրիստաւը սառեց գոյնը քցեց նահանգապետը.
ձեռքի զամպին բարձրացրեց, բայց երբ մեղալս տեսաւ
գոռաց.

—Ո՞րտեղից է քեզ այս մեղալը.

—Ձերդ մեծութիւն, ասացի...—ու ինքս դողում
եմ բարկութիւնից, ձերդ մեծութիւն, շատ տարի չի-

անցել երբեք ես էլ Կարսի տակումը մեր թագաւորի փառքի համար կռուել եմ, արիւն եմ թափել, այս մեղալը թագաւորն ա տուել ինձ...

Մութմութաց, ոտները խփեց ձիու կողքին ու անցկացաւ։

— Ես ձեզ ցոյց կը տամ... գողաց նա հեռուից...

Ո՛նց չէ, ցոյց կը տաս, մեղալս բաս ընչանցու ա, որ դու ինձ ցոյց տաս։

Տղերք, ձեր գործերին գնացէք. «մարդ ի պատուի էր և ոչ իմացաւ»...

Ո՛նց թէ մտրակ քաշի ինձ վրայ։ Ես Պօղոս քէ-հեան լինեմ, մեղալ ունենամ, նրան պատիւ տամ ու նա իմ աղն ու հացը չընդունի...

Այ, մէկ ուրիշ բան էլ պատմեմ, որ տեսնես թէ ինչ մարդ է մեր էդ նահանգապետը... Ամա, ներողութիւն, որ առաջ մէկ պապիրոս վառեմ... հրամանքդ չեմ ծխում, հայր սուրբ...

Հայր-սուրբը հանեց մի պապիրոս, տուաւ նրան, մէկը ինքը առաւ, միւսը ինձ տուաւ և երբ բոլորս էլ վառել էինք, ծերունին մի երկու անգամ խոր կերպով ծխեց ու շարունակեց.

— Հա, էն էի ասում... մեզնից որ բարկացած անցկացաւ, քիչ առաջ գնաց։ Դէհ, գիւղացիք գործերը թողած, հաւաքուել նայում են։ Մի պատիկ տղայ էլ, եղները թողել էր ու թմաշա էր անում. եղները առաջ այնքան ձիաւոր որ տեսան, խրտնեցին ու քիչ մնաց ճանապարհի վրայ ելնէին. տղան վախեցաւ, փէտը բաշեց ու աշխատեց դէմն առնել ու նահանգապետի անցնելիս՝ գլխարկը չը հանեց. դէ ինչ գիտէր, որ պիտի գլխարկը հանել։ Նահանգապետս կասես կրակ կտրած, ձին կանգնացրեց, հրամայեց տղային մօտ գալ ու գողաց վրան.

— Դու չը գիտես, ասում է, որ նահանգապետն է անցնողը, ինչո՞ւ գլխարկդ չես վերցնում։

Դիւղացու տղայ, ոռւսերէն, նահանգապետ ու գլխարկ հանել... Դրտեղից կիմանար։ Վախեցաւ ձայնիցն ու ետ քաշուեց։ Նահանգապետը մտրակը քաշեց նրա վրայ ու սկսեց խփել. տղան փախաւ. նահանգապետն էլ մտրակը ձեռքին ընկաւ նրա ետեւից... Ժիժաղ էր... ինչ մեղքս պահեմ. առաջ բոլորս էլ սառեցինք, յետոյ ես մի պի՛նդ ծիծաղեցի։ Նահանգապետը լսեց, էլ չը վաղեց տղի ետեւիցը, ետ եկաւ ու մէկ փի՛ս նայեց երեսիս։ Ո՛նց չէ. կը վախենայի, այ. բայց ծիծաղս զսպեցի և ուղիղ երեսին նայեցի...

— Անպիտաններ... մութմութաց ու անցաւ...

Կէս ժամից յետոյ կառք էինք նստում։ Պօղոս քահանայի զուարթ ու ժպտալից դէմքով գլխարկը հանեց, պատկառանք հայր սուրբի ձեռքը համբուրեց ու ասաց.

— Վեհափառին մեր խոնարհ ողջոյնը. նրա սուրբ աջին զուրբան, որ մէկ էլ մեզ արժանացնի ու այս կողմերով անց կենայ, ես Պօղոս քահանայ չը լինեմ թէ հազար ձիաւոր չը հանեմ այս դաշտից...

1900

Վ. ՓԱՓԱԶԵԱՆ